Հավելված N 10
ՀՀ փոխվարչապետի
N 577-Ն որոշման

«ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐԱԶԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Փրկարար ծառայությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանը (ձևը կցվում է) շնորհվում է փրկարարական ծառայողներին:

2. «Փրկարար ծառայությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանը շնորհում է պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. «Փրկարար ծառայությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանը բաղկացած է 44 մմ երկարությամբ և 30 մմ լայնությամբ խաչից, որի կենտրոնում տեղակայված է 5 մմ տրամագծով շրջանաձև սկավառակ, որի եզրագծի երկայնքով գրված է «ԳԵՐԱԶԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» հայերեն գրությունը: Սկավառակի կենտրոնում պատկերված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով: Սկավառակը ներքևի հատվածում ամփոփված է ՀՀ ծածանվող եռագույնով՝ կարմիր, կապույտ, նարնջագույն: Խաչի թևերը պատված են մուգ կարմիր էմալով:

4. «Փրկարար ծառայությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանը հակառակ կողմի կենտրոնական մասում ունի պտուտակային ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրացնելու համար, որի տակ երեք շարքով առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» հայերեն գրառումը: Ամրակը բաղկացած է 2 մասից՝ հեղույսից՝ Մ2.5 X 8 մմ չափսերով և պտուտակից՝ 20 մմ տրամագծով:

5. «Փրկարար ծառայությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանի հետ տրվում է վկայական:

Ձև

«Փրկարար ծառայությունում գերազանց

ծառայության համար» կրծքանշան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ